ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ՕՐԴ ԳՐՈՒՊ» ՍՊ Ընկերության կողմից ներկայացված ՀՀ Արարատի մարզի Կարմիրսարի կրաքարային մերգելների /կավակրաքարերի/ հանքավայրի օգտակար հանածոյի հանքարդյունահանման աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ հանրային քննարկում /1-ին լսում/:

Վեղի համայնք Գինեվետ բնակավայր **15.10.2025 թ.**

2025 թ. հոկտեմբերի 13-ին, ժամը 14:00-ին ՀՀ Արարատի մարզի Վեղի համայնքի Գինեվետ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում /գյուղ Գինեվետ, Գործարանային 5/ տեղի ունեցավ «ՕՐԴ ԳՐՈՒՊ» ՍՊ Ընկերության (այսուհետ նաև՝ ընկերություն) կողմից ներկայացված ՀՀ Արարատի մարզի Կարմիրսարի կրաքարային մերգելների /կավակրաքարերի/ հանքավայրի օգտակար հանածոյի հանքարդյունահանման աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ հանրային քննարկում /1-ին լսում/:

Հանրային քննարկմանը մասնակցում էին Վեղու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Հրաչյա Ստեփանյանը, Վեղի համայնքի ղեկավարի տեղակալներ՝ Բագրատ Շահինյանը, Նշան Հովհաննիսյանը, Վեղի համայնքի ավագանու անդամներ՝ Սերոբ Ավետիսյանը, Գեղամ Գրիգորյանը, Արայիկ Գևորգյանը, աշխատակազմի Գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ՝ Շամո Բաքոյանը, նույն բաժնի գլխավոր մասնագետներ՝ Սիմոն Կարապետյանը, Վահրամ Ծատուրյանը, «ՕՐԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Սամվել Օրդուխանյանը, ընկերության ներկայացուցիչները, ինչպես նաև Ընկերության փաստաբան՝ Դավիթ Հովսեփյանը, «Յուլի-Դալի» ՍՊ Ընկերության տնօրեն՝ Լիլիթ Փաշինյանը, Ներդրումների աջակցման կենտրոն հիմնադրամի ներկայացուցիչ՝ Սվետլանա Վարոսյանը, համայնքի բնակիչներ, ֆիզիկական անձինք, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների ներկայացուցիչներ, համայնքապետարանի աշխատակիցներ, ինչպես նաև վարչական տարածքի ներկայացուցիչներ:

Մասնակիցների ելույթները

Ելույթ ունեցավ Վեղու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Հրաչյա Ստեփանյանը և հայտնեց, որ իրականացվում են «ՕՐԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ՀՀ Արարատի մարզի Կարմիրսարի կրաքարային մերգելների /կավակրաքարերի/ հանքավայրի օգտակար հանածոյի հանքարդյունահանման աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ թվով 1-ին հանրային քննարկումը: Նշեց, որ հանրային քննարկման վերաբերյալ հանրային ծանուցումը սահմանված կարգով իրականացվել է: Հաջորդիվ հայտարարեց, որ Վեղի համայնքի ղեկավարի կողմից քննարկումների պատասխանատու է նշանակվել Վեղու համայնքապետարանի աշխատակազմի Գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ՝ Շամո Բաքոյանը և խոսքը փոխանցեց վերջինիս:

Վեղու համայնքապետարանի աշխատակազմի Գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ՝ Շ. Բաքոյանը ողջունեց բոլորին, ներկայացրեց աշխատակարգը և նշեց, որ քննարկվող հարցով առաջին հանդիպումն է, ըստ կարգի Ընկերության ներկայացուցիչները հանդես գան զեկույցով, այնուհետ կծավալեն քննարկումներ, ելույթներ և հարց ու պատասխան:

Խոսքով հանդես եկան «ՕՐԴ ԳՐՈՒՊ» ՍՊ Ընկերության ներկայացուցիչ՝Արմեն Մանուկյանը և «Յուլի-Դալի» ՍՊ Ընկերության տնօրեն՝ Լիլիթ Փաշինյանը,վերջինս հայտնեց, որ «ՕՐԴ ԳՐՈՒՊ» ՍՊ Ընկերության կողմից ներկայացված է ՀՀ Արարատի մարզի Կարմիրսարի կրաքարային մերգելների /կավակրաքարերի/ հանքավայրի շահագործման աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ հանրային քննարկում /1-ին լսում/: Հաջորդիվ հայտնեց, որ օրենքի պահանջներին համապատասխան դիտարկվել է ազդակիր համայնքը և բնակավայրը, որտեղ և իրականացվում է 1-ին հանրային քննարկումը: Ներկայացվեց նաև բացահանքի մասին և նրան վերաբերվող տեղեկություններ, մոտակա բնակավայրերի տվյալները և հեռավորությունը հանքավայրից, ինչպես նաև ներդրումների չափը, աշխատատեղերի վերաբերյալ տեղեկատվությունը, սոցիալական ծրագրերը:

Հաջորդիվ հարց հնչեցրեց Վեդու համայնքապետարանի աշխատակազմի Գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ՝ Շ. Բաքոյանը.

1.Որքան տարածք է հայցվում Ընկերության կողմից:

2.Ունենալու եք արդյոք սեփական ջրի աղբյուր:

Հարցերին պատասխանեց «Յուլի-Դալի» ՍՊ Ընկերության տնօրեն՝ Լիլիթ Փաշինյանը, հայտնելով, որ ակնկալում են համայնքից 54.0 հա. մակերեսով տարածք: Ունենալու են սեփական ջրի աղբյուր, ավելցուկը կտրամադրվի բնակավայրի բնակիչներին, անվճար:

Հաջորդիվ խոսքով հանդես եկավ Այգեզարդ բնակավայրի բնակիչ՝ Արփինե Խաչատրյանը, հայտնելով իր անհանգստությունը շահագործվելիք հանքավայրին մոտակա գյուղատնտեսական մշակաբույսերի վերաբերյալ և հայտնելով, որ Այգեզարդ բնակավայրի բնակիչները նույնպես անհանգստություն են հայտնում վարչական տարածքում միևնույն գործունեություն ծավալող Ընկերության գործունեությանը:

Հաջորդիվ որպես Արփինե Խաչատրյանի խոսքի շարունակություն խոսքով հանդես եկավ ազգությամբ հայ Դանիայի հանրապետության բնակիչ՝ Գևորգ Ավագյանը, հայտնելով, որ դեմ է Այգեզարդ բնակավայրում նախկինում հատկացված և գործունեություն ծավալող ընկերությանը նույնպես և հայտնելով, որ արդեն իսկ վերը նշված Ընկերության գործունեության թույլատվության ժամկետը ավարտված է:

Ելույթներին ի պատասխան խոսքով հանդես եկավ «Յուլի-Դալի» ՍՊ Ընկերության տնօրեն՝ Լիլիթ Փաշինյանը, հայտնելով, որ այսօր «ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» Ընկերության հանրային քննարկումը չէ, իսկ ինչ վերաբերվում է նշված Ընկերության գործունեության ժամկետներին, այն տրվել է մինչև 2030 թվականը:

Հաջորդիվ հարց հնչեցրեց Այգեզարդ բնակավայրի բնակիչ՝ Մարգարիտա Պողոսյանը, հարցնելով արդյոք կողմնորոշվել են ջրաղբյուրի վերաբերյալ, որտեղից են ջուր ունենալու:

Հարցերին պատասխանեց «Յուլի-Դալի» ՍՊ Ընկերության տնօրեն՝ Լիլիթ Փաշինյանը, հայտնելով, որ ունենալու են ջրի սեփական աղբյուր, ունենալու են կարիքից ավելին ջրի պաշարներ, անվճար տրամադրելու են համայնքի ազդակիր բնակավայրերի հողագործներին:

Հաջորդիվ հարց հնչեցրեց ազդակիր Գինեվետ բնակավայրի բնակիչ՝ Սամվել Գալստյանը, հետաքրքրվելով արդյոք նոր կառուցվելիք ցեմենտի գործարանը տարբերվելու է «Արարատ ցեմենտ» գործարանից իր արտանետումներով:

Հարցին պատասխանեց «Յուլի-Դալի» ՍՊ Ընկերության տնօրեն՝ Լիլիթ Փաշինյանը, հայտնելով, որ այսօր հանքավայրի օգտակար հանածոյի հանքարդյունահանման աշխատանքների վերաբերյալ է հանրային քննարկումը, սակայն տեղեկացրեց, որ կառուցվելու է փակ ցիկլով, էլեկտրական օդամաքրիչով, նոր սերնդի գործարան:

Հաջորդիվ հարց հնչեցրեց, փաստաբան՝Նազելի Վարդանյանը.

1.Ներկայացրեք ծրագիրը ամբողջությամբ:

2.Ինչպես եք նստեցնելու փոշեզանգվածը, ինչպես եք պայքարելու փոշու առկայության դեմ:

3.Նշեք ջրի աղբյուրը, որից օգտվելու եք:

1-ին հարցին պատասխանեց Ընկերության փաստաբան՝ Դավիթ Հովսեփյանը, նշելով, որ այսօրվա զեկույցը իրենք կառուցել են համաձայն ՀՀ կառավարության 19 նոյեմբերի 2014 թվականի N 1325-Ն որոշմամբ, այն է հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին: Այնուհետ հարցերին պատասխանեց «Յուլի-Դալի» ՍՊ Ընկերության տնօրեն՝ Լիլիթ Փաշինյանը, նշելով, որ Ընկերությունը ունենալու է սեփական ջրի աղբյուր, համայնքային ջուր չի օգտագործելու, իսկ ինչ վերաբերվում է փոշու առկայությանը կիրառելու են պարբերաբար փոշու նստեցում ջրցան մեքենաներով, հանքավայրի շուրջ կառուցելով եռաշերտ փոշեպաշտպան գոտի:

Հաջորդիվ հարց հնչեցրեց ազդակիր Նոր Ուղի բնակավայրի վարչական ղեկավար՝ Սնակ Առաքելյանը.

1.Ներկայացրեք ներդրումների չափը:
2.Արդյոք առկա են մեխանիզմներ հանքավայրի և գործարանի գործունեության դադարեցման, եթե պարտավորությունները չի կատարվում:

Հարցին պատասխանեց «ՕՐԴ ԳՐՈՒՊ» ՍՊ Ընկերության ներկայացուցիչ՝ Արմեն Մանուկյանը, նշելով, որ նախատեսվում է 25 մլն դոլարին համարժեք ՀՀ դրամ, անհրաժեշտության դեպքում կավելացնեն: 2-րդ հարցին պատասխանեց համայնքապետարանի աշխատակազմի Գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ՝ Շամո Բաքոյանը, նշելով, որ համայնքապետարանը Ընկերության հետ ունի հուշագիր, որով այդ ռիսկերը կարգավորվում են:

Հաջորդիվ հարց հնչեցրեց Արսեն Սիմոնյանը /Խաղողագործների միության նախագահ/.

1.Արդյոք հաշվարկվել են վնասները մոտակա բնակավայրերի հողագործների, նկատի ունենալով ծանր մետաղները և ինչպես է իրականացվելու վերահսկողությունը:
2.Արդյոք ջրի աղբյուրը ընտրելու եք Հրազդան-Արաքս կոլեկտորը/Կախանով/:

Հարցին պատասխանեց «Յուլի-Դալի» ՍՊ Ընկերության տնօրեն՝ Լիլիթ Փաշինյանը, նշելով, որ հանքավայրը մետաղակ չէ, այդպիսի վտանգ չկա, իսկ ինչ վերաբերվում է ջրին, կհստակեցվի և աղբյուրը և ծավալները, չեն օգտվելու համայնքային ջրերից:

Հաջորդիվ հարց հնչեցրեց ազդակիր Գինեվետ բնակավայրի բնակիչ՝ Անդրանիկ Միքաելյանը. հարցնելով 25 մլն ներդրումը արդյոք բավարար է:Հարցին պատասխանեց «ՕՐԴ ԳՐՈՒՊ» ՍՊ Ընկերության ներկայացուցիչ՝ Արմեն Մանուկյանը, նշելով,որ բոլոր ծախսերը գնահատված և հաշվարկված են: Կարիքի դեպքում գումարը կավելացվի:

Հաջորդիվ հարց հնչեցրեց ազդակիր Գինեվետ բնակավայրի բնակիչ՝ Վարդուհի Բարսեղյանը, նշելով, որ անցյալ տարի «ՕՐԴ» ՍՊ Ընկերությունը բացասական եզրակացություն ստացավ, արդյոք շտկվել են թերությունները:

Հարցին պատասխանեց «Յուլի-Դալի» ՍՊ Ընկերության տնօրեն՝ Լիլիթ Փաշինյանը, հայտնելով, որ դիմել են ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտին, արդյոք հայցվող տարածքում կան ՀՀ կարմիր գրքում գրանցված բույսեր, ստացվել է պատասխան 10.10.2025 թվականին, որ նշված կորդինատներում գարնանը ՀՀ կարմիր գրքում գրանցված բույսեր չկան:

Հաջորդիվ հարց հնչեցրեց ազդակիր Գինեվետ բնակավայրի բնակիչ՝ Իշխան Մկրտչյանը, անհանգստություն հայտնելով, արդյոք ինչու համանման լսումներ չեն անցկացվում Նոր Ուղի և Այգեզարդ բնակավայրերում, քանի, որ այդ բնակավայրերից բնակիչներ կան ներկա:

Հարցին պատասխանեց «Յուլի-Դալի» ՍՊ Ընկերության տնօրեն՝ Լիլիթ Փաշինյանը, նշելով, որ Գինեվետ բնակավայրը ազդակիր բնակավայր է իրենց կողմից հայցվող տարածքի համար, ուստի հանրային քննարկումները /լսումները/ պետք է անցկացվեն Գինեվետում:

Այնուհետև ելույթ ունեցավ ազդակիր Գինեվետ բնակավայրի բնակիչ՝ Լենդիկ Սահակյանը, հայտնելով իր զոհունակությունը «ՕՐԴ ԳՐՈՒՊ» ՍՊ Ընկերության նախաձեռնությանը:

Հաջորդիվ հարց հնչեցրեց Միհեր Կարագոզյանը /Հանրային վերահսկողություն ՀԿ ղեկավար/.

1.Ներդրումների մասին տեղեկատվությունը շատ մակերեսային էր.

2.Չկար ցեմենտի գործարանի վերաբերյալ տեղեկատվություն.

Հարցերին պատասխանեց «ՕՐԴ ԳՐՈՒՊ» ՍՊ Ընկերության ներկայացուցիչ՝ Արմեն Մանուկյանը, նշելով, որ այսօր ցեմենտի գործարանի հանրային քննարկումը չէ, այլ հանքավայրի, ուստի իրենք այս քննարկմանը ներկայացնում են իրենց մտադրությունները: Համայնքի ավագանու դրական որոշում ստանալուց հետո մանրամասն կներկայացնեն հաշվետվություն:

Հաջորդիվ հարց հնչեցրեց ազդակիր Գինեվետ բնակավայրի բնակիչ՝ Մարիամ Բարսեղյանը,

1.Բնակավայրը ինչ կունենա Ձեր գործունեությունից.

2.Սողունները կմոտենան բնակավայրին , այդ դեպքում ինչ անել.

Հարցերին պատասխանեցին համայնքապետարանի ներկայացուցիչները, նշելով, որ ոչ միայն այս ներդրման պայմաններում, այլ նաև ընթացիկ և նախորդ տարում բնակավայրում ներդրումներ եղել են:

Հաջորդիվ նախագահողը հարց ուղղեց, թե արդյոք կան հարցեր, թե՞ ոչ: Հաշվի առնելով, լսման մասնակիցների դիրքորոշումը հայտարարեց հանրային քննարկման ավարտ:

Կից ներկայացվում է մասնակիցների ցանկը 3 թերթ և հանրային քննարկումների էլեկտրոնային կրիչը:

Վարող՝ Գյուղ. և Բնապահ. Բաժնի պետ՝ / / Շ. Բաքոյան

Նախաձեռնող՝ «ՕՐԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի տնօրեն՝ / / Ս. Օրդուխանյան

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

«ՕՐԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ՀՀ. Արարատի մարզի Վեդի համայնքի Գինեվետ բնակավայրի վարչական տարածքում գտնվող օգտակար հանածոյի հանքարդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ հանրային քննարկում /1-ին լսում/:

Վեդի համայնք. Գինեվետ բնակավայր **13.10.2025թ.**

Հ/Հ	Անուն, Ազգանուն	Զբաղեցրած պաշտոնը	Ստորագրություն
1.	[illegible]	[illegible]	
2.	[illegible]	[illegible]	
3.	[illegible]	[illegible]	
4.	[illegible]	[illegible]	
5.	[illegible]	[illegible]	
6.	[illegible]	[illegible]	
7.	[illegible]	[illegible]	
8.	[illegible]	[illegible]	
9.	[illegible]	[illegible]	
10.	[illegible]	[illegible]	
11.	[illegible]	[illegible]	
12.	[illegible]	[illegible]	
13.	[illegible]	[illegible]	
14.	[illegible]	[illegible]	
15.	[illegible]	[illegible]	
16.	[illegible]	[illegible]	
17.	[illegible]	[illegible]	
18.	[illegible]	[illegible]	
19.	[illegible]	[illegible]	
20.	[illegible]	[illegible]	
21.	[illegible]	[illegible]	

22.	[illegible]	[illegible]	041300988
23.	[illegible]	[illegible]	
24.	[illegible]	[illegible]	
25.	[illegible]	[illegible]	
26.	[illegible]	[illegible]	
27.	[illegible]	[illegible]	
28.	[illegible]	[illegible]	
29.	[illegible]	[illegible]	
30.	[illegible]	[illegible]	
31.	[illegible]	[illegible]	
32.	[illegible]	[illegible]	
33.	[illegible]	[illegible]	
34.	[illegible]	[illegible]	
35.	[illegible]	[illegible]	
36.	[illegible]	[illegible]	
37.	[illegible]	[illegible]	
38.	[illegible]	[illegible]	
39.	[illegible]	[illegible]	
40.	[illegible]	[illegible]	
41.	[illegible]	[illegible]	
42.	[illegible]	[illegible]	
43.	[illegible]	[illegible]	
44.	[illegible]	[illegible]	
45.	[illegible]	[illegible]	
46.	[illegible]	[illegible]	
47.	[illegible]	[illegible]	
48.	[illegible]	[illegible]	
49.	[illegible]	[illegible]	
50.	[illegible]	[illegible]	

51.	[illegible]	[illegible]	
52.	[illegible]	[illegible]	
53.	[illegible]	[illegible]	
54.	[illegible]	[illegible]	
55.	[illegible]	[illegible]	
56.	[illegible]	[illegible]	
57.	[illegible]	[illegible]	
58.	[illegible]	[illegible]	
59.	[illegible]	[illegible]	
60.	[illegible]	[illegible]	
61.	[illegible]	[illegible]	
62.	[illegible]	[illegible]	
63.	[illegible]	[illegible]	
64.	[illegible]	[illegible]	
65.	[illegible]	[illegible]	
66.	[illegible]	[illegible]	
67.	[illegible]	[illegible]	
68.	[illegible]	[illegible]	
69.	[illegible]	[illegible]	
70.	[illegible]	[illegible]	
71.	[illegible]	[illegible]	
72.	[illegible]	[illegible]	
73.	[illegible]	[illegible]	
74.	[illegible]	[illegible]	
75.	[illegible]	[illegible]	
76.			
77.			
78.			
79.			